# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է Ազգային ժողովի
կողմից
14 ապրիլի 1999 թ.

## ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

### Հոդված 41. Կրթական գործունեության լիցենզավորումը

1. Օրենքով նախատեսված կրթական ծրագրերը «և նախադպրոցական ծառայությունը» կարող են իրականացվել միայն լիցենզիայի առկայության դեպքում: Լիցենզիան տրվում է ուսումնական հաստատությանը հետևյալ պահանջների բավարարման դեպքում.

1) հիմնական մանկավարժական և պրոֆեսորադասախոսական կազմ.
2) լաբորատոր բազա և ուսումնական տարածք.
3) ուսումնամեթոդական ապահովում.
4) գրադարանային-տեղեկատվական համակարգ.
5) ուսումնաարտադրական պրակտիկայի բազա:

2. Կրթական գործունեության լիցենզիան տալիս է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

3. Կրթական ծրագրերի «և նախադպրոցական ծառայության» լիցենզավորումն իրականացվում է օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով: